

## Բազմաձայնությունը և առոգաբանությունը

*Այունց Անուշ*

*Երևանի Պետական Համալսարան*

«Բազմաձայնություն» տերմինը գարկանագիտության մեջ ներմուծվեց ռուս փիլիսոփա, գրաքննադատ Մ. Բախտինի կողմից, որի ուսումնասիրությունները լեզվի, ժողովրդական մշակույթի և վեպի պատմության փոխհարաբերության վերաբերյալ մեծ ներդրում էին գրականագիտության մեջ: Պնդելով, որ լեզուն զարգացող ամբողջություն է, որի ձևը և իմաստը մշտապես հղկվում են պատմությունով և մշակույթով՝ Բախտինը հերքեց մտքի կարծրացած համակարգը, վեր հանելով տարբեր տերմիններ, որոնցից էր լեզուների բազմաձայնությունը, որ արտացոլվում է արվեստում: Բախտինի աշխատությունները, որոնք վեր հանեցին տեքստերի սոցիալական, մշակութային, քաղաքական բնույթը և համատեքստի առաջնահերթ կարևորությունը, մեծ ներդրում էին գեղարվեստական տեքստերի և դրանց ներունակության ուսումնասիրության համար:

Ըստ Բախտինի խոսքային բոլոր դրսևորումները հետերոգլոտ /տարալեզու/ են կամ բազմաձայն, այն առումով, որ դրանց մեջ առկա են տարբեր ձայներ: Հետերոգլոտիան /տարալեզվությունը/ և պոլիֆոնիան /բազմաձայնությունը/ ցանկացած խոսքային դրսևորումների իմաստի ուղղորդման հիմնական նախապայմաններն են: Տարալեզվություն ասելով Բախտինը ի նկատի չունի միայն տարբեր ժողովրդական լեզուները, այլ այն գաղափարախոսությունները, որ առկա են տարբեր լեզուներում, որոնցով տարբերվում են սոցիալական խավերը և անհատները /մասնագիտությամբ, տարիքին, սոցիալական խավին, ընտանիքին, ընկերական շրջապատին բնորոշ լեզուն և գաղափարախոսությունը/:<sup>1</sup>

---

<sup>1</sup> Տես՝ Վոլոսինով, Բախտին «Մարքսիզմը և լեզվի փիլիսոփայությունը», թարգմանությունը Լադիսլավ Մաժեյկայի, New York; Seminar press, 1973, p. 88

Հետագայում Բախտինը առաջ է քաշում այն տեսակետը, որ բազմաձայնությունն առկա է բոլոր բառերում կամ ձևերում. «Յուրաքանչյուր բառ համեմվում է այն համատեքստից, որտեղ այն ապրել է իր սոցիալական կյանքը, բոլոր բառերում և ձևերում բնակեցված են միտումներ»:<sup>2</sup>

Բախտինը ձայների շերտավորում հնարավոր էր համարում միայն վեպում: Ըստ նրա վեպի էպիկական ոճն է հնարավոր դարձնում գրողի համար ներառել ձայներ ձայների մեջ /օր. կերպարի խոսքը պատմիչի խոսքի մեջ, պատմիչի խոսքը հեղինակի խոսքի մեջ և այլն/ և սույնով ստեղծել նրանց երկխոսությունը:

Բախտինի համար ամենից բազմազան էր Դոստոևսկու արձակը: Նա բնորոշում է Դոստոևսկու արձակը որպես բազմաձայն, ասելով, որ ի տարբերություն մյուս հեղինակների Դոստոևսկին չի ձգտում մեկ տեսանկյան, նա նույն իրավիճակը դիտարկում է տարբեր տեսանկյուններից: /Բախտին, 1972/

Ավելի ուշ ներմուծվեց բառի բազմաձայնություն տերմինը պրոֆեսոր Ս. Գասպարյանի կողմից, ով փորձ կատարեց զուգահեռներ անց կացնել տերմինի հնչողական և բառացի մեկնաբանությունների միջև: /Գասպարյան, 1983/<sup>3</sup>

Փոխառված լինելով երաժշտությունից, որտեղ բազմաձայնությունն ակնկալում է մի շարք համահունչ երաժշտական ձայների միաժամանակյա առկայացումը, բազմաձայնություն տերմինը բավականին հաջողված կարելի է համարել գրականագիտության մեջ: Այն վեր է հանում բառերի իմաստային ներունակությունը: Բազմաձայնությունը բառերի տարբեր իմաստների, հարիմաստների, իմաստային երանգների և ասոցացիաների, որ սերտորեն փոխկապակցված և միահյուսված են բառի ներքին ունակության մեջ,

---

<sup>2</sup> Bakhtin, The Dialogic Imagination, 1973, p. 293

<sup>3</sup> Նշենք նաև, որ բազմաձայնություն տերմինն օգտագործվում է հնչյունաբանության մեջ, երբ միևնույն տառը ներկայացնում է տարբեր հնչյուններ և դրանց միություններ: /Grand Dictionary of Phonetics, Tokyo 1981/

միաժամանակյա առկայացումն է: /Ջադորնովա Վ., 1984; Գասպարյան Ս., 1991/

Տերմինն իհարկե պայմանական է, սակայն կարելի է համարել բավականին հաջողված՝ բառի բարդ խորությունն ի հայտ բերելու հարցում: /Գասպարյան Ս., 1983/ Այն անդրադարձնում է բառի ունակությունը բազմիմաստ հնչելու միևնույն համատեքստում: Հնչողություն ասելով չի ակնկալվում բառի հնչողական կողմը /հնչունաբանության առումով/ այլ վերջինիս տարբեր մտքեր ծնելու և տարբեր բացատրություններ, մեկնաբանություններ առաջացնելու ունակությունը: Գրական ստեղծագործության մեջ բառերը բազմաձայն են դառնում ի շնորհիվ իրենց բանաստեղծական իմաստի: /Գասպարյան Ս., 1991/

Այսպիսով բազմաձայնության սահմանումը հետևյալն է.

*Բազմաձայնությունը քերթողական արվեստում բառի իմաստային, հարիմաստային և ասոցիատիվ ունակությունների միաժամանակյա առկայացումն է:* Վերը բերյալը առավել ընկալելի դարձնելու համար անդրադառնանք Վ. Ջադորնովայի ուսումնասիրություններից մեկին, որտեղ զուգադրվել են Շեքսպիրի «Վենետիկի Վաճառականը» դրամայի տարբեր թարգմանությունները: Ուսումնասիրությունը վեր է հանում այն փաստը, որ բազմաձայն բառի տարբեր իմաստները, որոնք անգլերենում առկայանում են մեկ բառի մեջ, թարգմանված են տարբեր իմաստներով թիրախ լեզվի տարբեր թարգմանություններում: Օր.՝ temporal power արտահայտության մեջ (His scepter shows the force of temporal power) իրականացվում են հավասարապես և «ժամանակավոր իշխանություն» և «արքունական իշխանություն» իմաստները: Թարգմանություններում այս իմաստները տարանջատված են. «Светская власть» և «временная власть»: Սա ևս օրյեկտիվորեն ապացուցում է temporal բառի բազմաձայնությունը: /Ջադորնովա Վ., 1984/

Գասպարյանը նմանատիպ ուսումնասիրություններից մեկում նշում է, որ ստեղծագործության տարբեր թարգմանություններ պետք է ուսումնասիրվեն ոչ թե տարանջատ այլ զուգադրաբար: /Գասպարյան Ս., 1991/

Նմանատիպ մի օրինակ է *memory* բառը Լ. Ղարբեղի ստեղծագործությունում: Ֆրանսերեն լեզվում *memory* բառի իմաստները տրոհված են: Անգլերենի մեկ միավորին համապատասխանում են երկու միավոր, այն է՝ *memoir* և *souvenir*: Սա ևս ապացուցում է բառի բազմաձայնությունը:

Պետք է նշել, որ բազմաձայնությունը մեծապես համարվում է խոսքաբանական երևույթ, քանի որ այն իրականանում է խոսքում՝ հեղինակի ստեղծարար միտման արդյունքում, ի հակադրություն բազմիմաստության, որը բնորոշ է զուտ լեզվական մակարդակին: Ստեղծագործությունն ինքն է ապահովում նախապայմաններ բազմաձայնության առկայացման համար: Սակայն պետք է նշել, որ նույնիսկ լեզվական մակարդակում ի հայտ են գալիս բազմաձայնության տարրեր:<sup>4</sup>

Բանաստեղծական արտահայտչականությունը և պատկերավորությունը հատուկ են ոչ միայն բանաստեղծական ոճին, այլև արձակաին: Համարվելով քերթողական արվեստի տարատեսակ՝ զգայական արձակը ներառում է բանաստեղծական լեզվի բոլոր տարրերը, բացառությամբ հանգավորումից: Արտահայտչազգայական երանգները, որ բառերը ձեռք են բերում գրական ստեղծագործության համատեքստում տեսանելի են դարձնում ընթերցողի համար այն, ինչ առաջին հայացքից չի երևում:

Քերթողական արվեստի ստեղծագործության համար մեծ կարևորություն են ներկայացնում նաև ուղղահայաց և հորիզոնական համատեքստերը: Հորիզոնական իրենից ներկայացնում է ամբողջ ստեղծագործությունը, իսկ

---

<sup>4</sup> Խոսել բազմաձայնության մասին, որպես քերթողական արվեստի բնորոշ երևույթի, դեռևս չի նշանակում, որ բազմաձայնությունը չի առկայանում հենց լեզվական մակարդակում: Երբեմն բառի իմաստներն այնքան են սերտաճում լեզվական մակարդակում, որ դժվար է նույնիսկ դրանք տարանջատել: Օրինակ *fortune* բառի բառարանային իմաստները *բախտ, ճակատագիր, կարողություն* այնքան են սերտաճել, որ մեկը ասես բխում է մյուսից:

ուղղահայցը այն ամբողջ դարաշրջանն է, իր պատմական և մշակութային ամբողջությամբ, երբ գրվել է ստեղծագործությունը:

Ավելացնելով նշենք, որ բանաստեղծական ուղղվածություն ունեցող համատեքստը հանդես է գալիս որպես պարարտ հող բառերի համար, որոնք սնվում են նրանից:

Ի. Գալպերինը անդրադառնալով բառերի ձևի և բովանդակության հարաբերակցությանը նշում է, որ վերջիններս կարող են հանդես գալ համահունչ կամ հակասական կախված համատեքստից: Սա ևս պացուցում է համատեքստի կարևորությունը գեղարվեստական ստեղծագործության ընկալման հարցում: Մի կողմից կարող են լինել համատեքստեր, որոնք արդեն իսկ պատկերավոր են և լի պատկերավոր, հուզական երանգներով, հարիմաստներով և ասոցեացիաներով: Մյուս կողմից կարող են լինել պրոզաիկ համատեքստեր, որոնք բացառում են հուզական երանգների հնարավոր ազդեցությունը: /Գասպարյան Ս., 1991/

Լինելով բազմակողմանի երևույթ՝ գեղարվեստական ստեղծագործության ընկալումն ու վերլուծությունը ներառում է տարբեր հայեցակետեր, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի խոսքի առոգաբանությունը: Ըստ Լ. Շչերբայի ցանկացած գրվածք ունի «ներքին հնչողություն», որն ասես հնչում է ընթերցողի մտքում: Քերթողական արվեստի ստեղծագործության «ներքին հնչողությունն» ակնկալում է ստեղծագործության ռիթմային և մեղեդային յուրահատկությունը և ձայներանգների փոխհարաբերումը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարբեր ոճական հնարներ քերթողական արվեստի ստեղծագործության մեջ ձեռք են բերում ձայներանգի տարբեր հատկանիշներ: (Ախմանովա Օ. 1973, Գասպարյան Ս. 1991 և այլն)

Անշուշտ այդ հնչողությունը հիմնվում է տեքստի առոգանական հատկանիշների վրա՝ արտացոլելով հեղինակի միտումը: Այսպիսով, առոգանությունը, որի շնորհիվ հեղինակի կամ կերպարների «ձայնը» հասնում է ընթերցողին, քերթողական արվեստի աշխատությունների կարևորագույն բաղադրիչներից է, և ստեղծագործության վերլուծության ժամանակ չի կարելի

անտեսել վերջինիս առոգաբանական կառույցը: Առոգանություն ասելով ակնկալվում է խոսքի հաճախականության, ուժգնության, տևողության, բարձրության, արագության և ռիթմի արտահայտիչ հաջորդականությունը:<sup>5</sup>

Առոգանության շնորհիվ է, որ տարբերվում են խոսքային միավորների այս կամ այն իմաստները, իսկ բանավոր խոսքի արտահայտչականությունը պայմանավորված է արտահայչամիջոցների և ձայներանգ II –ի (timber II) փոխազդեցությամբ: (Մինայեվա Լ., Մինդրուլ Օ. 1981, Գասպարյան Ս. 1991)

Լինելով հնչերանգի վերհատույթային միջոցների բարդ համալիր՝ ձայներանգ II-ը գործում է վերիմաստային մակարդակում՝ արտահայտելու իմաստի գեղագիտական, հուզական, գնահատողական տարբեր երանգներ:<sup>6</sup> Այս միջոցների մեջ կարևոր դեր են խաղում հնչերանգի բարձրության մոդուլյացիան, դիապոզոնը, արագությունը և ձայնի որակի փոփոխությունները, որոնք լինում են առաջնային և երկրորդային: Ձայներանգ II հասկացությունը ուսումնասիրվում է Օ. Մինդրուլի աշխատությունում:<sup>7</sup>

«Խոսքի առոգաբանությունը» ձեռնարկում, որն առնչվում է խոսքի ռիթմական կառույցին, փորձ է արվում պարզել ռիթմի տեղը առոգաբանական կարգերի համակարգում՝ ելնելով այն փաստից, որ նախադասությունը, նույնիսկ վերբառակապակցական միավորը, չի կարող զուրկ լինել ռիթմից: Ռիթմը խոսքային երևույթների արագացման և դանդաղեցման, ուժեղացման և թուլացման, երկարեցման և կարճացման, ինչպես նաև նմանատիպ և ոչ նմանատիպ տարրերի կանոնավոր հաջորդականությունն է: Խոսքի ռիթմային կառույցը սերտ կապի մեջ է խոսքի շարահյուսական կառույցի հետ, և ռիթմը պետք է ուսումնասիրվի այլ առոգաբանական կարգերի շարքում, ինչպիսիք են բաղաձայնայնությունը (alliteration), սկզբնակրկնությունը (anaphora), առձայնայնությունը (assonance), կրկնավերջույթը (epiphora), կրկնությունը (repetition), հանգը (rhyme), ռիթմիկ արձակը (rhythmical prose), շարույթը

<sup>5</sup> Տես՝ D. Crystal – Dictionary of Linguistics and Phonetics, չֆ 313

<sup>6</sup> Տես՝ Ախմանովա Օ. –Լեզվաբանական տերմինների բառարան, 1969, էջ 472

<sup>7</sup> Տես՝ Миндрул О. С. – Тембр II в функциональном освещении. Дис. канд. Филол. наук, 1980

(syntagm), որպես արձակի ռիթմի առանցքային միավոր, և այլն: (Ախմանովա Օ., Աբրամով Ա. և այլոք)

Դիտարկենք հետևյալ օրինակները.<sup>8</sup>

The mirror sees the man as beautiful, | the mirror loves the man; | another mirror sees the man as frightful | and hates him; | and it is always the same being | who produces the impressions. ||

(p. 208)

Ինչպես տեսնում ենք այս հատվածում առկա են բաղաձայնային (m, r, z, D), կրկնություն՝ վերջածանցի (-ful / beautiful, frightful/), բառի (mirror, sees, man) և բառակապակցության (the mirror sees the man) և կանոնավոր դադարներ:

Առոգաբանական կարգերի այսպիսի առատությունը մեկ հատույթում մեծ գեղագիտական տպավորություն է գործում ընթերցողի վրա: Միևնույն ժամանակ 'mirror' բառը ձեռք է բերում բազմաձայնական հնչողություն: Կարելի է ենթադրել, որ բառի մեջ առկայանում են տարբեր պատկերներ. մի կողմից այն մարմնավորում է հեղինակին և նրա ստեղծագոնությունը, մյուս կողմից՝ իրականությունը, կյանքը և մարդկանց:

Դիտարկենք մեկ այլ օրինակ.

Truth is what most contradicts itself in time. (p. 216)

Էջ 277-ում կրկնվում է նույն նախադասությունը, սակայն անավարտ.

Truth is what most contradicts itself...||

Այստեղ բազմակետերով արտահայտված դադարը փոխարինում է 'in time' բառակապակցությանը, որն անշուշտ հնչում է ընթերցողի մտքում: Ջեղչված արտահայտությունը ձեռք է բերում ոճական կարևորություն, քանի որ ընթերցողն ակամայից խորհում է 'in time' արտահայտության շուրջ, դրանով իսկ առավել կարևորելով ժամանակը:

---

<sup>8</sup> Օրինակները վերցված են Լ. Դարբելի «Ալեքսանդրյան քառյակ» ստեղծագործությունից

Վերը բերվածից կարելի է եզրակացնել, որ բազմաձայնությունը չի կարող առկայանալ առանց առողաբանական կարգերի առկայության:

### Օգտագործված գրականություն

1. Բախտին Մ. - «Մարքսիզմը և լեզվի փոփոխությունը», թարգմանությունը Լադիսլավ Մաժեյկայի, New York; Seminar press, 1973
2. Bakhtin M. - The Dialogic Imagination, 1973
3. ԹորտոՐ՝վ Շ. - ԽՈՎՀՉՏսՏՅՑՈՍՈ ՏոՐՈԶվՏՀՏ ըՐՈՉվպվՈ՛. ԺՐԹձ, 1991
4. Гаспарян С. – Полифония слова в составе фигуры сравнения, 1983
5. Задорнова В. - Восприятие и интерпретация художественного текста, 1984
6. Миндрул О. – Метасемиотика Тембра II, 1981
7. Prosody of Speech ed. by O. Ahkmanova, 1973
8. Aiunts A.- The Polyphony of the Word as a Speechological Problem. YSU, 1996
9. Akhmanova O. – Словарь Лингвистических Терминов, 1969
10. D. Crystal – Dictionary of Linguistics and Phonetics, 1997
11. Grand Dictionary of Phonetics, Tokyo, 1981
12. L. Durrell- “The Alexandria Quartet” –Chapter II /Balthazar/

### Полифония и просодия

*А. Аюнци*

Термин “полифония” был введен в литературоведение филологом, литературоведом М. Бахтиным. Позднее профессор С. Гаспарян внедрил понятие полифония слова, которое подразумевает одновременная актуализация смыслов, коннотаций и ассоциативных потенциальностей слова в словесно- художественном



творчестве. “Внутреннее звучание” произведения словесно-художественного творчества подразумевает соотношение его ритмомелодических и тембральных особенностей. Исследования показали, что разные стилистические фигуры в произведениях словесно-художественного творчества овладевают разными тембральными свойствами. Наверняка, это звучание опирается на просодические качества текста, проявляя промысл автора. Полифония не может актуализоваться без наличия просодических категорий.

### Polyphony and Prosody

*A. Ayunts*

The term “polyphony” was introduced in literature by Russian philosopher M. Bakhtin. Later professor S. Gasparyan introduced the concept of verbal polyphony who made an attempt to draw parallels between the phonetic and semantic interpretations of the term. Polyphony is the simultaneous actualization of the semantic, connotative and associative potentialities of the word in a work of Verbal art. The ‘inner sounding’ of the work of verbal art presupposes the interrelation of rhythmical - melodic peculiarities and timbers. Studies have revealed that different stylistic devices acquire different timbral peculiarities in a work of verbal art. The sounding depends on the prosodic organization of the text revealing the authors intention. Summing up, polyphony cannot be actualized without prosodic parameters.